

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Ռ.Հ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Վարչապետ լույս է տեսել ԱՄՆ-ում բնակվող լեհ պատմաբան, Տ.Շվիենտոխովսկու «Ադրբեջան և Ռուսաստան» անգլերեն մենագրության լեհերեն թարգմանությունը՝ ընդարձակ հավելումներով և փոփոխություններով (Tadeusz S'Wietochowski, Azerbajdzana Rosia, Warszawa, 1998 թ.):

Աշխատությունը բաղկացած է ինն հատվածից և ընդգրկում է «ռուսական և իրանական մասերի» Ադրբեջանների պատմությունը՝ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից (1828թ.) մինչև 1995թ.: Քանի որ «ռուսական մասի Ադրբեջանի» պատմության շարադրանքի մեջ հեղինակը բազմիցս անդրադառնում է նախ հայոց պատմությանը, գրախոսվող գիրքը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև հայագիտության համար: Ցավոք, հատկապես «Ադրբեջանի վաղ շրջանի» պատմության մի քանի էջերի մեջ, բացառապես հենվելով ադրբեջանցի հեղինակների խեղաթյուրումների վրա, հեղինակը Ադրբեջան և ադրբեջանցի երևույթները տեսնում է նաև վաղ միջնադարում, թեև այդ հավաքականությունը «Ադրբեջան» և «ադրբեջանցի» անունով առաջին անգամ պաշտոնապես սկսեց գործածվել 1918թ.:

Ամբողջ գրքում հեղինակն առիթը բաց չի թողնում պատեհ կամ անպատեհ Արցախը հիշատակել որպես Ադրբեջանի խանություն: Նա պնդում է նաև, որ Թուրքմենչայի պայմանագիրը կնքվել է առանց ադրբեջանցիներին հաշվի առնելու և պատմական անարդարության խորհրդանիշ է Ադրբեջանի ժողովրդի համար (էջ 17):

Անցնելով ռուսական տիրապետության շրջանին՝ հեղինակը բավական ընդարձակ խոսում է Բաքվի նավթի ու նավթարդյունաբերության մասին: «Նավթարդյունաբերության սկզբնական փուլում, - գրում է հեղինակը, - մինչև 1872 թվականը, մոսկովյանները դեռևս տիրում էին նավթահորերի մեծ մասին, 1870թ. նավթահորերի 88 տոկոսը Կովկասի թաթարներին էր, որոնց պատկանում էր Բաքվի նավթահորերի եկամտի մոտ կեսը... 1872թ. տվյալներով, թաթարների ներդրումները չէին անցնում ամբողջ ներդրումների 5 տոկոսը, մինչդեռ հայերի ներդրումները տասնապատիկ ավելին էին: 1890 թվականին Բաքվի նավթարդյունաբերության մեկ երրորդ մասը հայկական Միրզոն, Մայիլով, Թադևոսյան, Մանթաշյան գերդաստանների ձեռքն էր... մինչդեռ թաթարներին պատկանում էր Ֆիրմաների միայն 18 տոկոսը» (էջ 33 - 34):

Անցնելով ադրբեջանցիների մեջ պանիսլամիզմի և թուրքիզմի թափանցման խնդրին՝ Տ.Շվիենտոխովսկին նշում է, որ պանթուրքիզմը եվրոպական գիտության մեջ է ներմուծել հունգարացի գիտնական Արմինիուս Վամբերին: Ռուսաստանում պանթուրքիզմի առաջամարտիկը Ղրիմի թաթար լրագրող Իսմայիլ Գասպրինսկին էր:

«Հեղափոխության ու քաղաքական արթնացման փուլը» ընդարձակ բաժինը լեհ պատմաբանը սկսում է 1905թ. «հայ թաթարական պատերազմի» թեմայից՝ նշելով, որ ազերիների քաղաքական արթնացումը սկսվում է հենց այդ ընդհարումներից:

Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայերի շարժիչ ուժը 1890թ. հիմնված Դաշնակցություն կուսակցությունն էր, «որը երկու տարի ավելի շուտ է ստեղծվել, քան ուսական կայսրության մեջ առաջին կուսակցությունը համարվող «Լեհական սոցիալիստական կուսակցությունը», նշում է հեղինակը:

Ադրբեջանական աղբյուրների հիման վրա արված հեղինակի այն պնդումը, թի ուսական իշխանությունները, հանձին Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովի, հայամետ քաղաքականություն էին վարում, անհիմն ու սխալ է: Լեհական ազգային, եկեղեցապատկան հոգևոր ու գույքը բռնագրավելու մասին ցարական հրամանից հետո, հայությունը ընկճելու նպատակով, ցարական իշխանությունները Կովկասի թաթարներին դիմեցին, արձակեցին հայերի վրա, որպիսով հայության ուղղորդությունը շեղեն իր մայր եկեղեցին կողոպտելու ցարական քաղաքականությունից և նրան հետ պահեն իր իրավունքների պաշտպանության համար սկսած համադրային պայքարից:

Անդրադառնալով Առաջին աշխարհամարտին՝ լեհ պատմաբանը գրում է. «1915թ. գարնանը ռուսական զորքերը Հայկական ոչ կանոնավոր ջոկատների օգնությամբ մտան Արևելյան Անատոլիա: Օսմանյան իշխանությունները, իրկուղիով, որ հայերը կանցնեն թուրքերի կողմը, կազմակերպեցին հայերի զանգվածային տեղահանություն, որը առաջ բերեց բախումներ, բռնություններ և դանդաղացի կոտորածներ» (էջ 73):

Պատահական չէ, որ ամերիկացի լեհ գիտնականը կրկնում է թուրք պատմաբանների ձեռնարկումները՝ «զանգվածային կոտորածներ», «զանգվածային տեղահանություն» և այլն՝ ոչ մի տեղ չնշելով «ցեղասպանություն» հասկացությունը:

«Բաքվի կոմունա» վերնագրով մի քանի էջանոց հատվածում պատմաբանը նորակազմում է, որ այդ ժամանակ «Բաքվի կոմունա» հորջորջումով Բաքվում հաստատվել էր բոլշևիկյան բռնապետություն՝ Ստեփան Շահումյանի լիազորությամբ, և որ «Ադերիների համար կոմունան բոլշևիկ-հայկական համադրականության խորհրդանիշ էր» (էջ 84):

Տ.Շվիհնսոնիսկին, ընկնելով ադրբեջանցի պատմաբանների ծուղակը, լրսերում է նյութի և իրադարձությունների բացարձակ անիրազեկություն, երբ (1918 - 1920թթ. վիճելի տարածքների մեջ է առնում նաև Նախիջևանի մարզը էջ 93), որը 1919թ. մինչև 1921թ. մարտի 16-ը եղել է Հայաստանի ներապետության անվիճելի մասը:

Անդրադառնալով 1920թ. սեպտեմբերին Բաքվում կայացած՝ Արևելքի ղոլովորդների համագումարին, հեղինակը գրում է. «... Քեմալական թուրքիայի բոլշևիկների մերձեցումը Ադրբեջանի դիրքերն ամրացրեց Հայաստանի հետ տարածքային խնդիրները լուծելու հարցում: Դա վերաբերում էր հատկապես Նախիջևանին... Մոսկվայի ռուս-թուրքական բարեկամության 1921թ. մարտի լայմանագիրը բարելավեց խորհրդային Ռուսաստանի և Անկարայի միջև արաբերությունները՝ հաշվի առնելով Ադրբեջանի հետ տարածքային կապ լինելու թուրքիայի պնդումները: Պայմանագրի հոդվածներից մեկը աստատում էր, որ Նախիջևանը չպիտի միացվի խորհրդային Հայաստանին, այլ որպես ինքնավար տարածություն, պիտի հանձնվի Ադրբեջանի նամակալությանը՝ թեև այն Ադրբեջանից անջատված էր Հայաստանի սարածքով:

Արցախի մասին լեհ պատմաբանը գրում է. «Խորհրդային Ադրբեջանի

քայլերից մեկը եղավ այն, որ Ադրբեջանը 1920թ. մայիսին Հայաստանին վերջնագիր ներկայացրեց Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայկական գործերից պարպելու համար, ինչը Երևանի վարչակազմը կատարեց անմիջապես: Մի քանի ամիս անց, դեկտեմբերի 2-ին տեղական կոմունիստները Հայաստանում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը, բայց նրանց դիրքերը Հայաստանում խախտում էին: Հայ ընկերների դիրքերն ամրապնդելու նպատակով Նարիմանովը Ադրբեջանի կոմկուսի անունից 1920թ. դեկտեմբերի 1-ին հռչակագիր հրապարակեց. «Խորհրդային Ադրբեջանը Հայտարարում է, որ այս պահից տարածքային ոչ մի վեճի պատճառով արյուն չպիտի թափվի դարեր շարունակ մոտ հարևաններ եղած երկու ժողովուրդների միջև: Լեռնային Արցախի աշխատավոր զանգվածները այժմ ստանում են ինքնորոշման լիարժեք իրավունք. բոլոր կարգի ռազմական գործողությունները Զանգեզուրում դադարեցվում են, և գործերը անմիջապես հետ են քաշվում» (էջ 127):

Սակայն հեղինակը միտումնավոր չի մեջբերել Նարիմանովի Հայտարարության այն մասը, ըստ որի, Նախիջևանն ու Արցախը Հայտարարվում են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս:

Աշխատության մեջ կարևոր տվյալներ կան Այսրկովկասի վտարանդիների գործունեության մասին: Օրինակ, նշվում է, որ 1921թ. հունիսին Վրաստանի (Ձխենկելի), Ադրբեջանի (Թոփչիբաշև), Հայաստանի (Ահարոնյան) և Լեռնային Կովկասի Հանրապետության ներկայացուցիչները համագործակցության հուշագիր ստորագրեցին, սակայն գործը տեղից չչարժվեց: Պատճառը նրանց միջև առկա խորը հակասություններն էին: Օրինակ, հայերը դժկամությամբ էին մտնում մի միություն մեջ, որը կարող էր «ուժեղացնել Թուրքիային, թուլացնել Ռուսաստանին» (էջ 156):

Դրանից հետո լեհ գործիչ Պիլսուդսկու նախաձեռնությամբ և Լեհաստանի կառավարության դրամական օժանդակությամբ 1925թ. ստեղծվեց ԽՍՀՄ-ի ոչ ռուս ժողովուրդների «Պրոմեթեա» միությունը: Գործը գլուխ բերելու համար Լեհաստանից Փարիզ գործուղվեց Տ. Հոլովկան, ուր և հիմնվեց այդ կազմակերպությունը: Կազմակերպության մեջ ստեղծվեցին վրացական, ադրբեջանական, ուկրաինական, մերձվոլգյան և Ղրիմի թաթարների, թուրքմենական, կովկասյան լեռնականների, նաև կարելա-Ֆիննական մասնաճյուղեր: Բացակայում էին միայն հայերը (էջ 156):

Անցնելով նորագույն ժամանակներին՝ Շվիցնտոխովսկին գրում է. «Հայ-ադրբեջանական հակամարտությունը... սկսվեց 1988թ. փետրվարին, երբ... Մոսկվան մերժեց Լեռնային Արցախը Հայաստանին միացնելու՝ Արցախի իշխանությունների հանրագիրը, Երևանը դրան պատասխանեց զանգվածային ցույցերով ու գործադուլներով: Նույնը կրկնվեց նաև Հայաստանի այլ շրջաններում և Լեռնային Արցախում, որի ընթացքում ցույցերի ժամանակ երկու հանրապետություններում էլ եղան Հայ-ադրբեջանական բախումներ: Դրանք առավել արյունալի դրսևորում ստացան Ադրբեջանի արդյունաբերական Սումգայիթ քաղաքում, ուր սպանվեցին կամ վիրավորվեցին մի քանի տասնյակ հայեր»: «Երևանում անցկացված այդ հավաքներին մասնակցում էին հարյուր հազարավոր մարդիկ... Վերին աստիճանի բարձր կարգապահ հուլիսյան և կազմակերպվածությամբ անցկացվող այդ հավաքներով դրանց կազմակերպիչները կարողանում էին Երևանի ու Արցախի հանրահավաքները համակարգել, որով կարողացան արթնացնել Մոսկվայի, Բեյրութի, Լոս Անջելեսի կամ Բոստոնի

գաղթավայրերը: Մինչդեռ, Հայկական իշխանությունների դեմ աղբյուրական քաղաքի Հանրահավաքները սպառնում էին ամբոխի կողմից վերածվել սուպակայունացնող գործոնի, ինչպես եղավ Սումգայիթում», – շարունակում է Հեղինակը (230):

«1990թ. Հունվարի 10-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը... Լեոնային Արցախի ռնակիչներին տվեց Հայաստանի ընտրություններին մասնակցելու իրավունք: Միաժամանակ, լուրեր էին պտտվում, թե Հայկական զինյալ ջոկատները գրոհել են Շահումյանի և խանլարի մերձակա գյուղերի վրա: Դրան ի պատասխան, Ադրբեջանի ժողովատնական գերագույն խորհուրդում հիմնեց «պաշտպանություն Հանձնախումբ»: Հունվարի 13-ին Ադրբեջանի ժողովատնական գումարած Հանրահավաքից անջատվելով՝ որոշ խմբեր ներխուժեցին Բաքվի Հայերի բնակարանները, դրանք մեծ մասամբ կատարում էին Հայաստանցի ադրբեջանցիները» (էջ 239):

«Ականատեսների վկայությամբ, ԽՍՀՄ ներքին գործոց նախարարության լիցենզիաները ջարդերի ընթացքում չեղարկվել էին պահպանում, ինչը ցույց է տալիս, որ վարչակազմը հակահայկական գործողությունները ցանկանում էր արգելադրել: Ծաղաղործելու ռազմական միջամտության համար... մասնավոր շուկայում քննարկվում էին, որ Ադրբեջանի ժողովատնական ղեկավարները և լուրիչները Հայերին պաշտպանում էին՝ երբեմն վտանգելով իրենց կյանքը: Հատուկ պարեկները նրանց օգնում էին, որպեսզի Հայերը կարողանան ճողովել ինչևէ. նավահանգիստ, իսկ այնտեղից՝ ծովով դեպի Կրասնովոդսկ: Սակայն կային ևս ցուցմունքներ այն մասին, որ ժողովատնական ուրիշ խմբեր ջարդերի հանդեպ Խորհրդային էին պահպանում կամ նույնիսկ մասնակցում էին դրանց... Զոհվողների ղեկավարի բարձրակետը... ամսի 19-ն էր: Բոլոր կարգի զորքերը ռազմածովային և այլն) հատուկ նշանակության ջոկատների (սպեցնազ) հետ Դիախին, գեներալ Ալեքսանդր Լեբեդի ընդհանուր հրամանատարությամբ երեք օրվա ընթացքում ներխուժեցին Բաքու: Սկսվեցին փողոցային մարտերը: Պաշտոնական տվյալները այսպիսին են՝ խաղաղ բնակիչներից սպանված՝ 168, վիրավոր՝ 715, անհայտ կորած՝ 400: Զորքերի կորուստները՝ 28 սպանված, մոտ 80 վիրավոր» (էջ 240):

Անդրադառնալով Շուշիի և Լաչինի ուղղությամբ մարտական գործողություններին՝ Տ.Շվիդենտովսկին կրկնում է ադրբեջանցիների առաապելը Խոջալուի «կոտորածներին» մասին:

1994թ. մայիսին Հայաստանն ու Ադրբեջանը ԵԱՀԽ-ի միջնորդությամբ նքեցին զինադադար: Հռոմում սկսվեցին խաղաղության դժվարին անակցությունները: Բանակցություններում Ադրբեջանը առաջ էր քաշում ահմանների անձեռնմխելիության սկզբունքը՝ Արցախին խոստանալով նքնավարության ամենաբարձր կարգավիճակ, որի դիմաց Բաքուն չէր բացառում ավթամուղի անցկացումը Հայաստանով: Դրան հակառակ, Լեոնային Ղարաբաղի այերը պնդում էին անկախության վրա (էջ 266):

Անդրադառնալով Հայաստանում իշխանափոխությանը և Ռ.Քոչարյանի աղաքականությանը՝ լեհ սլաւամաբանը նրան համարում է ռուսամետ և «Արցախը՝ Ադրբեջանին վերադարձնելու հայտնի հակառակորդ» (էջ 271):

Կրակովում լույս է տեսել լեհահայոց եկեղեցու պատմության հմուտ

մասնագետ Քժիշտոֆ Ստոպկայի «Հայերը հին և արդի Լեհաստանում» գիրքը (Krzysztof Stopka, *Ormianie w Polsce dawnej i dzisiejszej*, Krakow, 2000, 175 էջ, ավելի քան 50 լուսանկար, 2 քարտեզ):

Գրքի վերջում գետեղված է Հայոց և լեհահայոց պատմության առանցքային հանգրվանները ներկայացնող ժամանակագրություններ՝ սեղմ տեղեկատվությամբ:

Հայոց պատմության ժամանակագրությունը սկսում է Քրիստոսից առաջ է դարից, ավարտում է 1991թ., իսկ լեհահայոց պատմության ժամանակագրությունը սկսում է 1298թ., որ ավարտվում է 1999թ.: Հարկավ, առավել արժեքավորը վերջին ցանկն է, ուր տեղ է հատկացվում լեհահայոց պատմությանը, մշակույթին, եկեղեցուն, իրավունքին, ազգագրությանը, առևտրին, գաղութի արդի պատմությանը և այլն:

Ինչպես պատմաբանների ճշող մեծամասնությունը, Քժիշտոֆ Ստոպկան ևս լեհահայոց պատմությունը սկսում է Հայերի՝ Կիևյան Ռուսիա մուտք գործելու ժամանակից (Ժ դար): Նշում է, որ Հայերը Կիևում բնակվում էին դեռևս Ժ դարից, իսկ ԺԲ դարում նրանք արդեն ունեին վաճառականների հոծ համայնք: Գրում է, որ ԺԳ դարի աղբյուրներն Արևելքը Արևմուտքին կապող «թաթարական ճանապարհի» բոլոր առանցքային հատվածներում (Կաֆա, Կիև, Լուցկ, Լվով, Կամենեց-Պոդոլսկ և այլն) նշում են հայկական գաղթավայրերի գոյությունը:

Լեհահայոց ամենաբազմամարդ և զորեղ գաղթավայրերը եղել են Լվովը և Կամենիցը, գրում է հեղինակը: Եվ ավելացնում, որ 1575թ. Կամենիցում բնակվում էր մոտ 300 հայ ընտանիք, 1586թ.՝ 400, երբ 1570թ. տվյալներով, ամբողջ քաղաքում կար ընդամենը 645 տուն (էջ 19):

Լվովում, նշում է հեղինակը, 1417թ. կար 1280 տուն, որից 337-ը՝ պատկանում էր Հայերին, իսկ 1575թ. Հայերի տների թիվը կրճատվում հասնում է 60-ի, 1618թ. Լվովում և արվարձաններում հայերն ունեին 130 տուն, 1704թ. Լվովում կար 73 հայ ընտանիք, իսկ 1728թ. Հայերի ընդհանուր թիվն իջնում էր մինչև 211 հոգի (էջ 21): Հեղինակը տվյալներ է բերում նաև մյուս քաղաքներում տարբեր ժամանակներում բնակվող Հայերի քանակի մասին՝ այդ տվյալներին կցելով Լեհաստանի թագավորության սահմաններում ԺԴ – ԺԸ դդ. հայ բնակչության տեղաբաշխման արժեքավոր մի քարտեզ (էջ 23):

Անցնելով լեհահայերի ազգանունների ու անձնանունների ծագմանը՝ հեղինակը առանձին մի հատվածում բերում է դրանց ընդհանուր պատկերը, նշելով, որ կային թե գուտ հայկական ծագումով (օր.՝ Վարդանովիչ, Բոհոսևիչ), թե արաբական (Նուրադին), պարսկական (Շահինշահ), հունական (սխալմամբ գրում է Մարսիրոս), սլավոնական (Իվաչկո, Ստեցկո, Վասիլ, Մաշկա, Դուխնա) և թե գուտ լեհական անվանումներ (Յան, Յաս, Շնջեյ): Հաճախ գուտ հայկական ծագում ունեցող Հայերի ազգանունները ձևափոխվում, թարգմանվում էին լեհերենի (օր.՝ Խաչատուրը դառնում էր Քժիշտոֆ, Աստվածատուրը՝ Բոգդան կամ Դեոդատ և այլն, էջ 25):

Հեղինակը բավական հանգամանալի ներկայացնում է լեհահայերի իրավունքը (էջ 25 – 35), եկեղեցին (էջ 36 – 42), վաճառականությունն ու արհեստները (էջ 44 – 54) և այլ բնագավառներ: Խոսելով Հայերի դիվանագիտական մեծ ծառայությունների մասին՝ նշում է, որ աղբյուրներից հայտնի առաջին հայ արհեստավարժ դիվանագետը Վլադիսլավ Յագիելլո

թագավորի մոտ ծառայած Գրիգորն է, որը թարգմանչի հանգամանքով մաս է կազմել 1415թ. Թուրքիա ուղարկված լեհական առաջին դիվանագիտական առաքելությանը (էջ 57):

Անցնելով լեհահայերի բռնի միության պատմությանը, լեհ պատմաբանը րավական կարևոր տվյալներ է բերում այդ միության նախապատմությանից՝ այն սկսելով 1439թ. Ֆյորենցիայի եկեղեցական ժողովից:

Այս հատվածում Քեիլտոֆ Ստոպկան, հետևելով բռնի միությունը ոչ բռնի համարող լատին պատմագիտությանը, պատմական մեկնաբանություններում, հստակապես նիկոլ Թորոսովիչի հարցում, դրսևորում է միակողմանի մոտեցում (էջ 59 – 67): Լեհահայոց եկեղեցու պատմության հետագա շարադրանքում լեհ պատմաբանը արժեքավոր տվյալներ է հաղորդում լեհահայոց եկեղեցու ավելի ուշ չրջանի պատմության վերաբերյալ: Հատկապես փաստառատ է լեհահայոց սլատուլթյան շարադրանքի վերջին հատվածը, որը վերաբերում է գաղութի վերջին չրջանի պատմությանը (1800 – 1999): Ցավոք, թե բուն շարադրանքում և թե «Հայոց պատմության» ժամանակագրության մեջ չի նշված Արցախյան ազատամարտի սկիզբը՝ 1988թ. փետրվարի 20-ը, որով սկսվեցին կոմունիստական կույրություն փլուզումն ու աղվերի անկախության պայքարը:

Քեիլտոֆ Ստոպկայի այս արժեքավոր աշխատությունը կարևոր ներդրում է լեհահայոց պատմության ուսումնասիրության բնագավառում, ուստի ցանկալի է, որ տպագրվի նաև հայերեն:

2001 թ. Լեհաստանում լույս են տեսել Հայագիտական մի շարք աշխատություններ, որոնցից առավել կարևոր են Կրակովում հրապարակված երեք ուսումնասիրությունները՝

Էդվարդ Տրյարսկու և Տադեուշ Զալեսկու գրքերը հրատարակել է լեհահայերի՝ Կրակովում գործող «Հայ մշակույթի համակիրների միությունը», որը հրատարակում է նաև «Բյուլետեն» անունով մի ամսագիր:

Էդ. Տրյարսկու «Հայերը Վարչավայում» աշխատությունը յուրահատուկ մի մասնակցություն է Լեհաստանում հրատարակության պատրաստվող՝ «Լեհահայերի կենսագրական բառարան»-ի ամբողջացմանը, հատկապես արժեքավոր է այն իմաստով, որ վերջին 15 տարիներին Լեհաստանում տպագրված Հայագիտական հոդվածներում և գրքերում վարչավահայության մասին շատ քիչ նյութեր կան: Մինչդեռ, վարչավահայերը կարևոր դեր են ունեցել Լեհաստանի մայրաքաղաքի XVII–XVIII դդ. պատմության մեջ: Գրքի արժեքը մեծանում է հատկապես XX դարի վարչավահայերի մասին առկա տեղեկություններով, քանի որ անցյալ դարի, մասնավորապես 1930–1990-ական թվականների վարչավահայ գաղութի մասին շատ քիչ տեղեկություններ են մտել գիտական չրջանառության մեջ: Եղած հատուկենտ տվյալներն էլ ցրված են լեհահայ պատմությանը վե-

¹ Էդվարդ Տրյարսկի, Հայերը Վարչավայում, նյութեր պատմագիտական ուսումնասիրությունների համար, 152 էջ (Edward Tryjarski, Ormianie w Warszawie, materiały do dziejów. Kraków, 2001), Տ. Տադեուշ Զալեսկի, Լեհահայ հոգևորականության հանրագիտական բառարան, 122 էջ (ks. Tadeusz Zaleski, Słownik Biograficzny Duchownych ormiańskich w Polsce, Kraków, 2001) և Կրակովի Յագելոնյան համալսարանի ուսուցչապետ, Հայտնի իրանագետ ու Հայագետ Անդժեյ Պիսովիչ, Հայերենի (գրաբարի և արևելահայ ուրբերակներ) քերականությունը, 480 էջ (Andrzej Pisowicz, Gramatyka Ormianska, zrabar-aszcharhabar, Kraków, 2001):

րաբերող Հարյուրավոր աշխատություններում ու հոգվածներում: Դրանք ի մի բերելն ու համակարգված ներկայացնելը դժվարին աշխատանք է, որը սիրով կատարել է հեղինակը՝ ավելի քան երեսուն տարի ուսումնասիրելով ոչ միայն տպագիր, այլև անտիպ աշխատություններ, դիվանական փաստաթղթեր ու այլ կարգի վավերագրեր: Ավելին. հեղինակը թերթել է «Վարչական կյանք» (*Zycie Warszawy*) օրաթերթի 1966 - 1999 թթ. համարները և գրախոսվող գրքում գետնից նշված թերթում տպագրված լեհահայերի բոլոր մահախոսականներից (160 հատ) հավաքված լուսանկարները: Տրեյարսկին չըջել է մայրաքաղաքի բոլոր 15 գերեզմանոցները և կազմել դրանցում թաղված բոլոր լեհահայերի ցանկը, ինչպես նաև գերեզմանների մոտ 80-ի լուսանկարները գետնից գրքում: Վարչավայում հայտնաբերված հայերեն մակագրությամբ հնագույն տապանագրերը երկուսն են, որոնք գտնվել են Դոմինիկյանների՝ Ս. Յացեկ վանքի բակում. մեկը՝ 1677 թ., մյուսը՝ 1683 թ. (հնագույններից երկուսն էլ Յազլովեց քաղաքի հայերից են): Վերջին չիրիմը թվագրված է 1999 թ.:

Հատուկ գլուխ է նվիրված 1918 - 1939 թթ. ժամանակաշրջանին, որտեղ բազմաթիվ գործիչների անուններ է հիշում (օրինակ, Վարչավայի օպերային թատրոնի տնօրեն, դերասան Սերգեյ Շելկովնիկով, Վարչավայում գորգերի մեծ խանութի տեր Սարգիս Փանոսյան, օպերային հայտնի երգիչ Սերգեյ Մետաքսյան, սենատոր Սամուել Մանուգեկիչ, ազգային-քաղաքական խոշոր գործիչ Յանուշ Ենջելսկիչ, որը Յուզեֆ Պիլսուդսկու գլխավորությամբ գործող՝ Լեհաստանի ազատագրական բանակի քաղաքական նշանավոր ղեկավարներից էր, 1933-1934 թթ. Լեհաստանի Հոգևոր գործերի և լուսավորության նախարարը և ուրիշներ):

Վերջին գլուխը նվիրված է XX դարավերջի վարչակազայ գաղութի ներկայացուցիչներին: Այստեղ ևս Տրեյարսկին նշում է բազմաթիվ ազգանուններ, ներկայացնում լեհահայերի մշակութային, կրթական ու տնտեսական կազմակերպությունները, անդրադառնում Հայաստանից 1990-ական թվականներին Վարչավայ գաղթած հայերին ու նրանց ծավալած գործունեությանը (օրինակ՝ նրանց ջանքերով 1995 թ. հունվարի 8-ին Վարչավայի Զոլիբուժ թաղամասում բացվել և կարճ ժամանակ գործել է «Հայոց լեզվի և մշակույթի» Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցը», որն ուներ մոտ 50 աշակերտ):

Տաղետուշ քահանա Զալեսկու (լեհահայերի այսօրվա հոգևոր հովիվն է) աշխատությունը բացվում է կաթոլիկ հայերի «Կիլիկիո կաթողիկոս և պատրիարք» Ներսես-Պետրոս ԺԹ-ի առաջաբանով, ուր նշվում է, որ լեհահայոց եկեղեցին մեծ ներդրում է ունեցել Լեհաստանի և ընդհանրապես կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ: Ներսես-Պետրոս ԺԹ մեջբերում է Հռոմի Հովհաննես-Պողոս քահանայապետի հետևյալ խոսքերը. «...Իմ հայրենիքում (Լեհաստանում - Ռ.Հ.) գործել է ձեր կաթոլիկ հայոց եկեղեցին, որը լեհ ժողովրդի պատմության մեջ գրել է սքանչելի դրվագներ: Չենք կարող մոռանալ լեհահայոց մեծ եպիսկոպոսների անունները, հատկապես նրանցից վերջինին՝ Լվովի արքեպիսկոպոս Թեոդորովիչ մեծ եպիսկոպոսին, լեհահայոց և լեհ եկեղեցիների մեծ վերանորոգչին, Կրակովի իմ մեծ նախորդի՝ կարդինալ Սապիեհայի մեծ բարեկամին»:

Բառարանում սրված են XVII-XX դդ. Լեհաստանում գործած 246 (հիմնականում հայագրի) եկեղեցական գործիչների համառոտ կենսագրականները: Յուրաքանչյուր բառահոգվածից հետո նշված է աղբյուրը: Հեղինակը այդ բոլոր հոգևորականներին պայմանականորեն բաժանում է տասը խմբի. Լվովի արքեպիսկոպոսներ (լեհահայ եկեղեցու պետերը), Լվովի թեմի քահանաներ (այս խումբը

ամենաբազմաբանական է), Հռոմի պապական ճեմարանի Հայ շրջանավարտներ, որոնք Փոքր Ասիայում և Մերձավոր արևելքում բնակվող Հայ ընտանիքի գլուխներն էին, Մխիթարյաններ (Հիմնականում Վիեննայի) և այլն: Ցուցակում ընդգրկված են նաև լեհահայ եկեղեցիներում տարբեր ժամանակներ ծառայություն մատակարարած փոքրաթիվ լատին հոգևորականներ, նաև լեհեր, որոնցից, օրինակ, Ստեփան Վրչնևսկին, 1920-ական թվականներին ծառայելով լեհահայոց եկեղեցում, 1957 թ. ընտրվեց լեհական եկեղեցու գլուխ (պրիմաս):

Աշխատությունների մեջ շատ կարևոր տեղեկություններ կան լեհահայոց եկեղեցու կազմակերպական կառույցի փոփոխությունների մասին, որոնք տեղի ունեցան նրկերով աշխարհամարտի բռնկումից հետո: Մինչ այդ, 1939 թ. մահացավ կաթոլիկ եկեղեցու շրջանակներում մեծ հեղինակություն ունեցող Յուզեֆ Թեոդորովիչ արքեպիսկոպոսը: Լեհահայոց եկեղեցական ժողովը ընտրեց երեք թեմական, որոնցից մեկին Վատիկանը պիտի նշանակեր լեհահայոց եկեղեցու գլուխ: Սակայն նրկերով աշխարհամարտը սկսվելուց հետո նրանցից ոչ մեկը չնշանակվեց: Մինչև 1954 թ. լեհահայոց եկեղեցին ղեկավարում և Վատիկանի առաջ պատասխանատու էր Դիոնիս Կոյետանովիչը: Նրա մահվանից հետո լեհահայոց եկեղեցին փաստորեն մնում է անգլուխ: 1957 թ. Վատիկանի՝ Արևելյան եկեղեցիների տեսչությունը որոշում կայացրեց լեհահայ եկեղեցին ենթարկել Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու պետին (պրիմաս): Փաստորեն, լեհահայ եկեղեցին, որ մոտ 200 տարի անմիջականորեն ենթարկվում էր Հռոմի Պապին և սեփական տնկախ արքեպիսկոպոսություն էր, 1957 թ. հետո կորցրեց տնկախությունը և ենթարկվեց Լեհաստանի պրիմասին: 1985-1992 թթ. լեհահայոց եկեղեցու տեսուչը Կաղիմիր Յիլիսկան էր, որը բազմիցս դիմումներ էր հղում Հռոմի Պապին՝ վերականգնելու լեհահայոց եկեղեցու արքեպիսկոպոսությունը: Նրա մահվանից հետո լեհահայոց եկեղեցու տեսուչ կարգվեց Տադեուշ Բաշուտա Ջայնսկին, որի ջանքերով լեհահայ եկեղեցին այժմ ենթարկվում է ոչ թե լեհ կաթոլիկ եկեղեցու պետին, այլ կաթոլիկ Հայոց կաթողիկոսին: Ի դեպ, եթե XVIII դարում լեհահայ եկեղեցին ունեցել է 19 թեմ (պարաֆիա), ապա XIX դարակեսում դրանց թիվը կրճատվեց՝ Լվովի, Բեթեմանի, Ստանիսլավի, Լբսիցի, Տլումենիցի, Կուտի, Հորոգենկայի և Մայատինի, ներառյալ Չեռնովիցի և Սուչավայի պարաֆիաները:

Հեղինակը բառարանը կազմելիս օգտագործել է Լեհաստանի, Հռոմի, Լվովի եկեղեցական ու պետական ղեկավանների, ինչպես նաև առանձին աշխատությունների նյութեր, թվով միասին մոտ հարյուր աղբյուր:

Աշխատությունը տպագրվել է Լեհաստանի մշակույթի նախարարության նյութական օժանդակությամբ և նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700 և լեհահայ եկեղեցու պետ Իսահակ Միկոլայ Իոակովիչի մահվան հարյուր ամյակին:

Անդժեյ Պիսովիչի «Հայերենի քերականությունը» լույս է տեսել Կրակովի Յուզեֆինյան համալսարանի և Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամի հովանավորությամբ: Այն որևէ լեզվով գրաբար-աշխարհաբար քերականության կառուցվածքը միասին ներկայացնող առաջին գիտական ձեռնարկն է, որն, ի դեպ, գրված է լեզվաբանության արդի չափանիշներին համապատասխանող մակարդակով:

Քերականությունը հեղինակը ձևել է լեհահայերին՝ «Հայաստանի քրիստոնեություն 1700-ամյակի առթիվ»:

Աշխատությունը սկսվում է Հայոց լեզվի և ժողովրդի պատմության մասին ընդհանուր տեղեկություններով: Մանրամասն ներկայացվում են գրաբարը, միջին հայերենը, արդի աշխարհաբարի արևմտահայ ու արևելահայ տարբերակները և բարբառները:

Երկրորդ մասը նվիրված է գրաբարին (մոտ 160 էջ), ուր ներկայացվում են նախ՝ Հայոց այբուբենը, ապա՝ քերականական բոլոր հիմնական երևույթները (հնչյունաբանություն, բառակազմություն, շարահյուսություն և այլն):

Գրքի երրորդ բաժնում զուգահեռաբար ներկայացվում են արդի աշխարհաբարի երկու տարբերակների (արևմտահայերեն, արևելահայերեն) նմուշներ: Գրաբարյան մեջբերումները հեղինակը կատարել է ոսկեդարյան մեր մատենագիրների (Եզնիկ Կողբացի, Ագաթանգեղոս, Եղիշե, Մովսես Խորենացի և այլք) գործերից և նոր կտակարանից: Աշխարհաբար մեջբերումները և օրինակները՝ Գրիգոր Զոհրապի, Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի, Զարեհ Խրախունու, Պերճ Պոռչյանի, Զորայր Խալափյանի, Դերենիկ Դեմիրճյանի և այլ հեղինակների գործերից:

Աշխատությանը կցված են օգտագործված գրականության և աղբյուրների ցանկերը:

АРМЕНОВЕДЕНИЕ В ПОЛЬШЕ

Р. А. АМБАРЦУМЯН

Резюме

В 1998г. в Варшаве был издан польский перевод книги американского востоковеда польского происхождения Тадеуша Швентоховского “Азербайджан и Россия”, который вышел в свет в США в 1995г. Монография написана с проазербайджанской позиции.

В 2000г. в Кракове вышла в свет книга польского востоковеда-арменоведа Кшиштофа Столки “Армяне в древней и нынешней Польше”, в которой изложена история Армении с древних времен до наших дней, а также история армянской колонии в Польше в 1298 – 1999гг. В книге Эд. Трыарского “Армяне в Варшаве” дан краткий очерк истории армян в Варшаве.

В книге настоятеля польских армян Тадеуша Залеского (“Биографическая Энциклопедия духовенства польских армян”) представлена биография 246 церковных деятелей в основном армянского происхождения.

Ягеллонский университет Кракова и фонд Гулбенкяна в Лиссабоне издали в Кракове книгу видного армениста Анджея Писовича “Грамматика Армянского языка”, где изложена грамматика грабара, двух ветвей современного армянского языка - восточноармянского и западноармянского.